

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՔԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

№—Ե -03/33

գ. Շիրակամուտ

«07» 02. 2018թ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նալբանդյան

Ձեզ ենք ներկայացնում Շիրակամուտ համայնքի ավագանու թիվ 5-Ա, թիվ 6-Ն, թիվ 7-Ա, թիվ 8-Ա, թիվ 9-Ա, թիվ 10-Ա և թիվ 11-Ա որոշումները :



Համայնքի ղեկավար

Ա.Երանոսյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ**

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, հեռ. 0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ

„06” փետրվարի 2018 թվականի N5-Ա

**ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018Թ. ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին” ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Շիրակամուտ համայնքի ավագանու 2018թ. փետրվարի 6-ի արտահերթ նիստի օրակարգը
ՕՐԱԿԱՐԳ

1. Շիրակամուտ համայնքի 2018-2022թ.թ. սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա պլանը հաստատելու մասին :
2. Շիրակամուտ համայնքի 2018թ. տարեկան աշխատանքային պլանի մասին:
3. Շիրակամուտ համայնքի սեփականություն հանդիսացող 06-087-0049-012 ծածկագրով 0,073հա հողամասը աճուրդով օտարելուն համաձայնություն տալու մասին
4. Շիրակամուտ համայնքի սեփականություն հանդիսացող 06-087-0040-013 ծածկագրով 0,06832հա հողամասը աճուրդով օտարելուն համաձայնություն տալու մասին
5. Շիրակամուտ համայնքի սեփականություն հանդիսացող 06-087-0140-0004 ծածկագրով հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելուն համաձայնություն տալու մասին :
6. Շիրակամուտ համայնքում ինձամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմ հաստատելու մասին:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ / 5 /	դեմ / 0 /	ծեռնյախ / 0 /
Ա.Կյուրեղյան			
Յ.Մազմանյան			
Ա.Պապոյան			
Ն.Նասյան			
Յ.Նալբանդյան			



Համայնքի ղեկավար՝

Ա.Երանոսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, հեռ. 0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ
„06” փետրվարի 2018 թվականի N6-Ն

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018-2022Թ.Թ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական հնքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ կետի, 35-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով՝ Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

- Հաստատել ՀՀ Լոռու մարզի Շահումյան համայնքի 2018-2022թթ. սոցիալ տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/5 /	դեմ /0 /	ծեռնպահ/ 0 /
Ա.Կյուրեղյան			
Յ.Մազմանյան			
Ա.Պապոյան			
Ն.Նասյան			
Յ.Նալբանդյան			



Համայնքի ղեկավար՝

Ա.Երանոսյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ**

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, հեռ. 0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ
„06” փետրվարի 2018 թվականի N7-Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության ներկայացրած համայնքների տարեկան աշխատանքային պլանների մշակման մեթոդական ուղեցույցը՝

Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Շիրակամուտ համայնքի 2018թ. տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/ 5 /	դեմ /0 /	ծեռնպահ/ 0 /
Ա.Կյուրեղյան	<i>[Signature]</i>		
Հ.Մազմանյան	<i>[Signature]</i>		
Ա.Պապոյան	<i>[Signature]</i>		
Ն.Նասլյան	<i>[Signature]</i>		
Հ.Նալբանդյան	<i>[Signature]</i>		



Համայնքի ղեկավար՝

[Signature]

Ա.Երանոսյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ**

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, հեռ. 0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ
„ 06” փետրվարի 2018 թվականի N8-Ա

**ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-087-0049-0012 ԾԱԾԿԱԳՐՈՎ
0,073 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴՈՒՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ հոդվածի 1-ին կետով, <<Տեղափոխված հանրապետական մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001թ.286-Ն որոշմամբ հաստատված կարգով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է

Տալ համաձայնություն ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման 06-087-0049-0012 ծածկագրով, 4-րդ փողոց 5/1 հասցեում գտնվող 0,073 հա մակերեսով հողամասի վերաբերյալ աճուրդ վաճառքով օտարելու: Մեկնարկային գինը՝ 163000 ՀՀ դրամ, մասնակցության վճարը՝ 2000 ՀՀ դրամ, նախավճարը՝ մեկնարկային գնի 5%-ի չափով, աճուրդի քայլի չափը՝ 5000 ՀՀ դրամ: Հողամասի նկատմամբ սահմանափակումներ չկան:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ / 5 /	դեմ / 0 /	ձեռնպահ / 0 /
Ա.Կյուրեղյան			
Հ.Մազմանյան			
Ա.Պապոյան			
Ն.Նասյան			
Հ.Նալբանդյան			



Ս. Կյուրեղյան

Ա.Երանոսյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, հեռ. 0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ

„06” փետրվարի 2018 թվականի N9-Ա

**ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-087-0040-0013 ԾԱԾԿԱԳՐՈՎ
0,06832 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 67-րդ հոդվածի 1-ին կետով, <<Տեղակա
ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001թ.286-Ն
որոշմամբ հաստատված կարգով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Շիրակամուտ համայնքի
ավագանին որոշում է

Տալ համաձայնություն ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի սեփականություն հանդիսացող բնակելի
կառուցապատման 06-087-0040-0013 ծածկագրով, Հայկական փողոց 2/2 հասցեում գտնվող 0,06832հա մակերեսով
հողամասը մեկ լոտով աճուրդ վաճառքով օտարելու: Մեկնարկային գինը` 152000 ՀՀ դրամ, մասնակցության վճար
2000 ՀՀ դրամ, նախավճարը` մեկնարկային գնի 5%-ի չափով, աճուրդի քայլի չափը 5000 ՀՀ դրամ: Հողամասի
նկատմամբ սահմանափակումներ չկան:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ/5 /	դեմ /0 /	ծեռնպահ/ 0 /
Ա.Կյուրեղյան			
Հ.Մազմանյան			
Ա.Պապոյան			
Ն.Նասյան			
Հ.Նալբանդյան			



Համայնքի ղեկավար՝

Ա.Երանոսյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶ**

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, հեռ. 0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ
„06” փետրվարի 2018 թվականի N10-Ա

ՇԻՐԱԿԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-087-00140-0004 ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ կետով, 76-րդ հոդվածի 3-րդ կետով, <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ կառավարության 12.04.2001թ.286-Ն որոշմամբ հաստատված կարգով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Շիրակամուտ համայնքի ավագանին որոշում է

Տալ համաձայնություն ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի սեփականություն հանդիսացող ,06-087-0140 ծածկագրով, Հայկական փողոց թիվ 31/3 հասցեում գտնվող արտադրական նշանակության օբյեկտների հողամաս 3,4362 հա մակերեսով հողամասը մեկ լոտով վարձակալության իրավունքով 99 տարի ժամկետով տրամադրել Մեկնարկային վարձավճարը 39000 ՀՀ դրամ, մասնակցության վճարը 2000 ՀՀ դրամ, նախավճարը մեկնարկային վարձավճարի 5%-ի չափով, աճուրդային քայլը 5000 ՀՀ դրամ; Հողամասի նկատմամբ սահմանափակումներ չկան

Համայնքի ավագանու անդամներ	կողմ / 5 /	դեմ / 0 /	ծեռնպահ / 0 /
Ա.Կյուրեղյան			
Հ.Մազմանյան			
Ա.Պապոյան			
Ն.Նասյան			
Հ.Նալբանդյան			



Համայնքի ղեկավար՝ Ա.Երանոսյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**

ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Շիրակամուտ համայնք, հեռ. 0255-6-15-01

ՈՐՈՇՈՒՄ

„ 06 ” փետրվարի 2018 թվականի N11 -Ա

**ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՏՎԱՆՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ և ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**






Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 02.06.2016թ. թիվ 631-Ն որոշումով, նաև „Իրավական ակտերի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասով, համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Շիրակամուտ համայնքում խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը հետևյալ կազմով.

- | | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝
Հանձնաժողովի քարտուղար | Վաչագան Պալյան - համայնքի ղեկավարի տեղակալ
Հռիփսիկ Սարգսյան - առաջատար մասնագետ |
| Անդամներ՝ | Հասմիկ Մազմանյան - ավագանու անդամ, թիվ 1 դպրոցի գրադարանավարուհի
Ազապի Մանուկյան - բուժքույր/իր համաձայնությամբ/
Սիլվա Թորոսյան - ոստիկանության ԱԳ տեսուչ/իր համաձայնությամբ/ |


2. Ուժը կորցրած ճանաչել Շիրակամուտ համայնքի ավագանու 24.01.2017թ., Շիրակամուտ համայնքում խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը հաստատելու մասին՝ թիվ 4-Ա որոշումը

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ / 5 /	դեմ / 0 /	ծեռնպահ / 0 /
Ա. Կյուրեղյան			
Յ. Մազմանյան			
Ա. Պապոյան			
Ն. Նասյան			
Յ. Նալբանդյան			



Համայնքի ղեկավար՝



Ա. Երանոսյան

**ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ
ՇԻՐԱԿԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔ**

Համայնքի 2018 թվականի

ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Կազմել է՝ համայնքի ղեկավար Աշոտ Երանոսյանը

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 06.02.2018 թ. -ի թիվ7-Ա որոշմամբ

Շիրակամուտ 2018թ.

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
• ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ և ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.....	3
• ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ և ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ)	7
• ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2018Թ. ԾՐԱԳԻՐԸ	16
• ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ	18
• ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ	20

Ներածություն

Շիրակամուտ համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ-ը) նպատակ ունի արդյունավետ պլանավորման միջոցով բարելավել համայնքում կայացվող որոշումների որակը: Հիմք ընդունելով համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը/ՀՀԶԾ/, ՏԱՊ-ը ուղղված է հստակեցնելու տարեկան կտրվածքով համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերը և միջոցառումները, դրանց իրականացման համար ներդրվող ռեսուրսներն ու ժամկետները: Որպես համայնքի տարեկան ծրագրային փաստաթուղթ այն նպատակ ունի ներգրավել համայնքի ներքին և արտաքին ներդրողների հնարավորությունները՝ համայնքային խնդիրները ավելի արդյունավետ լուծելու գործում:

ՏԱՊ-ի մշակման մեթոդական հիմք է հանդիսացել «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ-ի փորձագետների կողմից 2017 թվականին պատրաստված «Համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման» մեթոդական ուղեցույցը:

Շիրակամուտ համայնքի 2018թ.ՏԱՊ-ը բաղկացած է 5 հիմնական բաժիններից, որոնք կառուցված են ծրագրերի նպատակներից արդյունքներին հասնելու տրամաբանական հենքի վրա:

ՏԱՊ-ի 1-ին բաժնում ներկայացված են՝ համայնքի տեսլականը, համայնքի կայուն զարգացման ցուցանիշները (**Աղյուսակ 1**), ոլորտային նպատակները (**Աղյուսակ 2**):

ՏԱՊ-ի 2-րդ բաժնում բերված են համայնքի 2018 թվականի համապատասխան ֆինանսական միջոցներով ապահովված ծրագրերը (**Աղյուսակ 3**) և այդ ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (**Աղյուսակ 5**), ինչպես նաև այն ծրագրերը, որոնք դեռևս ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով (**Աղյուսակ 4**):

ՏԱՊ-ի 3-րդ բաժնում ներկայացված է՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքի կառավարման 2018 թվականի ծրագիրը (**Աղյուսակ 6**):

ՏԱՊ-ի 4-րդ բաժնում բերված է ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների (**Աղյուսակ 7**):

ՏԱՊ-ի 5-րդ բաժնում (Աղյուսակ 8) ներկայացված է՝ տեղեկատվություն ՏԱՊ-ում ներառված յուրաքանչյուր ոլորտային ծրագրի իրականացման արդյունքային ցուցանիշների մոնիթորինգի և գնահատման վերաբերյալ:

• Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

Ըստ Շիրակամուտ համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 6-ի թիվ որոշմամբ հաստատված ՀՀԶԾ-ի՝ համայնքի տեսլականն է՝ համայնքում զարգացնել գյուղատնտեսությունը, բարելավել համայնքի բնակչության սոցիալ տնտեսական վիճակը, համայնքը դարձնել մաքուր, բարեկարգ, առևտրի և սպասարկման, կրթական և մշակութային զարգացած ենթակառուցվածքներ, բնակչության համար բավարար կենսապայմաններ ունեցող և զբոսաշրջության համար գրավիչ տարածք:

Ստորև ներկայացված են համայնքի կայուն զարգացման ցուցանիշները:

Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%)	21,4	23,1
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)	2440	2460
Համայնքում տարվա ընթացքում ներդրումների ծավալը (հազ. դրամ)	9600,0	11000,0
Համայնքում գործող ՓՄՁ-ների քանակը և դրանցում աշխատատեղերի թիվը (հատ)	12/42	13/46

Ստորև սահմանված են համայնքի ոլորտային նպատակները՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների առանձին բնագավառների (ոլորտների):

Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Ոլորտ 1. Ընդհանուր Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը հանրային որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը:	Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի, աշխատակազմի, ՀՈԱԿ-ների գործունեությունից, մատուցված հանրային ծառայություններից	միջին՝ ոչ լավ, ոչ վատ	ավելի շատ լավ, քան վատ
	Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, %	21,4	23,1
Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում 2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում 2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			

<p>Բարելավել քաղաքաշինության և կոմունալ ծառայության բնագավառում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցումը և որակը:</p>	<p>Գիշերային լուսավորված փողոցների թվի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, %</p>	<p>12</p>	<p>16</p>
	<p>Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից (հարցումների հիման վրա)</p>	<p>բավականին վատ</p>	<p>ավելի շատ վատ, քան լավ</p>
<p>Ոլորտ 5. Հողօգտագործում</p>			
<p>2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:</p>	<p>-</p>	<p>-</p>	<p>-</p>
<p>Ոլորտ 6. Տրանսպորտ</p>			
<p>Բարձրացնել համայնքային ենթակառուցվածքի ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակը և ապահովել ճանապարհային անվտանգ երթևեկությունը:</p>	<p>Համայնքային ենթակառուցվածքի ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա)</p>	<p>ավելի շատ վատ, քան լավ</p>	<p>միջին՝ ոչ լավ, ոչ վատ</p>
<p>Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ</p>			
<p>2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:</p>			
<p>Ոլորտ 8. Կրթություն</p>			
<p>Բարձրացնել համայնքում կրթության որակը և մատչելիությունը:</p>	<p>ՏԻՄ-երի, կրթական հաստատությունների գործունեությունից, մատուցված ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա)</p>	<p>բավականին լավ</p>	<p>լավ</p>

Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			
2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 10. Առողջապահություն			
2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ			
2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն			
Ապահովել սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվող սոցիալական աջակցության հասցեականությունը և մատչելիությունը:	Սոցիալական ծրագրի առկայությունը, այո/ոչ	այո	այո
	Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը և հրականացվող ծրագրից	ավելի շատ վատ, քան լավ	միջին՝ ոչ լավ, ոչ վատ
Ոլորտ 13. Գյուղատնտեսություն			
2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 14. Անասնաբուծություն և բուսասանիտարիա			
2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն			
Ապահովել համայնքի բնակչությանը աղբահանության և սանիտարական մաքրման որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը և շրջակա միջավայրի մաքրությունը:	Համայնքի բնակիչների բավարարվածությունը մատուցված աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններից (հարցումների հիման վրա)	ավելի շատ լավ, քան վատ	բավականին լավ
	Տեղափոխված աղբի ծավալը, մ ³	36 0,0	400,0
Ոլորտ 16. Զբոսաշրջություն			

2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:	-	-	-
Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն			
2018 թվականի ընթացքում ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում, այդ պատճառով ոլորտային նպատակ չի սահմանվել:			

• **Համայնքի 2018 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)**

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ի այն ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով:

Աղյուսակ 3. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Բնակավայր(եր)ը
Ոլորտ 1. Ընդհանուր			
1.	Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում	24087,0	Գ.Շիրակամուտ
	Համայնքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում		Գ.Շիրակամուտ
	Ընդամենը		
Ոլորտ 4.Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			
1.	-Շիրակամուտ համայնքի փողոցային լուսավորության կետերի ավելացում, լուսամփոփների և հենասյուների ձեռքբերում	1000,0	Գ.Շիրակամուտ
2.	Արոտավայրերում խմոցների տեղադրում	500,0	Գ.Շիրակամուտ
	Ընդամենը	1500,0	
Ոլորտ 6. Տրանսպորտ			
1	Դեպի „Ալմալու“ արոտավայր տանող ճանապարհի նորոգում	400,0	Գ.Շիրակամուտ
	Ընդամենը	400,0	
Ոլորտ 8.Կրթություն			
1.	Համայնքում նախադպրոցական կրթության ծառայության մատուցում	5220,0	Գ.Շիրակամուտ

2.	Համայնքում արտադարձողական դաստիարակության ծառայության մատուցում	15300,0	Գ.Շիրակամուտ
	Ընդամենը	20520,0	
Ոլորտ 12.Սոցիալական պաշտպանություն			
1.	Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին	1160,0	Գ.Շիրակամուտ
	Ընդամենը	1160,0	
Ոլորտ 15.Շրջակա միջավայրի պահպանություն			
1.	Համայնքի բոլոր բնակավայրերում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցում	600,0	Գ.Շիրակամուտ
	Ընդամենը	600,0	
	Ընդհանուրը	48367,0	

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ի այն ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով:

Աղյուսակ 4. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Բնակավայր(եր) Ը
Ոլորտ 6. Տրանսպորտ			
1.	Շիրակամուտի ներհամայնքային ճանապարհների բարեկարգում՝ շեքենապատում	6000.0	Գ.Շիրակամուտ
	Ընդամենը	6000,0	
Ոլորտ 8.Կրթություն			
1.	Համայնքի Արևիկ մանկապարտեզի խաղահրապարակի և շենքի վերանորոգում	500.0	Գ.Շիրակամուտ
	Ընդամենը	500.0	
	Ընդհանուրը	6500,0	

Ստորև ներկայացված են ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների:

Աղյուսակ 5. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուրներ	Պատասխանատու	Ժամկետ
Ոլորտ 1. Ընդհանուր				
Ոլորտային նպատակ . Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը հանրային որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը:		Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. 1. Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի, աշխատակազմի, ՀՈԱԿ-ների գործունեությունից, մատուցված հանրային		

ծառայություններից - ավելի շատ լավ, քան վատ
 2. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում՝ 21,4%

Ծրագիր 1. Համայնքապետարանի աշխատակազմի պահպանում, հանրային որակյալ ծառայությունների մատուցում

<p>Ծրագրի նպատակ. Ապահովել աշխատակազմի բնականոն գործունեությունը, բարելավել բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը և մատչելիությունը:</p>	<p>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Աշխատակազմը բնականոն գործել է, բարելավվել է բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների մատչելիությունը և որակը - ավելի շատ լավ, քան վատ</p>	<p>Ծրագրի գնահատման համակարգ. ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար,</p>	<p>2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր</p>
---	---	---	---	--

<p>Միջանկյալ արդյունք 1. Ապահովվել է աշխատակազմի բնականոն գործունեությունը:</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1 ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի գործունեության վերաբերյալ բնակիչների իրազեկվածության աստիճանը (հարցումների հիման վրա) - բավականին լավ 2.ՏԻՄ-երի կողմից մատուցված համայնքային (հանրային, ոչ վարչական բնույթի) ծառայությունների թիվը -2 3.Անշարժ գույքի հարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում - 3%-ով 4.Համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում - 248 օր</p>	<p>Տեղեկատվական աղբյուրներ. Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, բնակիչներ</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար,</p>	<p>2018թ. հունվար 2018թ. դեկտեմբեր</p>
---	---	---	---	--

<p>Միջոցառումներ (գործողություններ) . 1. Աշխատակազմի պահպանություն 2. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգերի սպասարկում 3. Համայնքի անշարժ գույքի կառավարում 4. Համայնքապետարանի և վարչական ղեկավարների նստավայրերի շենքերի և գույքի ընթացիկ նորոգում</p>	<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</p> <ul style="list-style-type: none"> • Համայնքապետարանի աշխատակազմի պահպանման ծախսեր՝ 24087, 0 հազ.դրամ • Համայնքապետարանի աշխատակազմի աշխատողներ՝ 17 • Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգեր՝1 • Համայնքապետարանի վարչական շենք և գույք • Վարչական ղեկավարների նստավայրերի շենքեր և գույք <p>Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ</p>
--	---

<p>Միջանկյալ արդյունք 2. Բարձրացել է համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը:</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1.Համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման փաստացի գումարների տարեկան աճ- 5 %-ով 2.Հողի հարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում- 3 %-ով 3.Գույքահարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում -3 %-ով 4.Համայնքի բյուջեի սեփական եկամուտների գծով առկա ապառքների նվազեցում- 7%-ով</p>	<p>Տեղեկատվական աղբյուրներ Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ,</p>	<p>2018թ. հունվար 2018թ. դեկտեմբեր</p>
--	--	--	--	--

<p>Միջոցառումներ (գործողություններ) . 1. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների հավաքագրմամբ զբաղվող աշխատակիցների վերապատրաստումներ 2. Հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների բազաների ճշտում, հարկատուների ծանուցում</p>	<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ).</p> <ol style="list-style-type: none"> 1. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների հավաքագրմամբ զբաղվող աշխատակիցներ՝ 2 2. Հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և վճարների բազաներ՝ առկա է
---	--

<p>3. Ապառքներ ունեցող հարկատուների հետ բացատրական աշխատանքների իրականացում, պարտականությունները չկատարողների նկատմամբ դատարան կամ ԴԱՀԿ հայցադիմումների ներկայացում</p> <p>Միջանկյալ արդյունք 3. Բարելավվել է բնակչությանը մատուցված հանրային ծառայությունների մատչելիությունը և որակը</p> <p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1. Սպասարկման կենտրոն դիմած այցելուների թիվը - 105 2. ՏԻՄ-երի, համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքից, մատուցված ծառայությունների մատչելիությունից և որակից բնակիչների բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա) - ավելի շատ լավ, քան վատ 3. ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից ստացված դիմում-բողոքների թվի նվազում - 5 %-ով 4. Համայնքի ղեկավարի, ավագանու կողմից կազմակերպվող բնակիչների ընդունելությունների հաճախականությունը - շաբաթը 1 անգամ 5. Աշխատակազմում ստացված մեկ դիմումին պատասխանելու միջին ժամանակը – 2 օր</p>	<p>3. Համայնքի բյուջեի սեփական եկամուտների գծով առկա ապառքներ՝ 20455,4 հազ.դրամ</p> <table border="1" data-bbox="767 302 1562 1160"> <tr> <td data-bbox="767 302 1037 1160"> <p>Տեղեկատվական աղբյուրներ Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p> </td> <td data-bbox="1037 302 1380 1160"> <p>Համայնքի ղեկավարի տեղակալ, աշխատակազմի քարտուղար, ՀՈԱԿ-ների տնօրեններ,</p> </td> <td data-bbox="1380 302 1562 1160"> <p>2018թ. հունվար 2018թ. դեկտեմբեր</p> </td> </tr> </table>	<p>Տեղեկատվական աղբյուրներ Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավարի տեղակալ, աշխատակազմի քարտուղար, ՀՈԱԿ-ների տնօրեններ,</p>	<p>2018թ. հունվար 2018թ. դեկտեմբեր</p>
<p>Տեղեկատվական աղբյուրներ Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավարի տեղակալ, աշխատակազմի քարտուղար, ՀՈԱԿ-ների տնօրեններ,</p>	<p>2018թ. հունվար 2018թ. դեկտեմբեր</p>		

<p>Միջոցառումներ (գործողություններ) . 1. Աշխատակազմի աշխատողների արդյունավետ և թափանցիկ գործունեության ապահովում 2. Համայնքի ֆինանսական թափանցիկ և արդյունավետ կառավարում 3. Համայնքի գույքի կառավարման բարելավում 4. Աշխատակազմում գործող տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի գործունակ աշխատանքային վիճակի պահպանում և շահագործում 5. Աշխատակազմի աշխատակիցների աշխատանքային պայմանների բարելավում 6. Համայնքային կայքում առկա տեղեկատվության պարբերական թարմացում</p>	<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ). 1. Աշխատակազմում առկա համակարգչային սարքեր և սարքավորումներ - 11 2. Տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգեր – առկա է 3. Աշխատակազմում ֆինանսական (այդ թվում՝ գույքի) կառավարման հարցերով զբաղվող աշխատողներ -3 4. Աշխատակազմում տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի կառավարման հարցերով զբաղվող աշխատողներ -1 5. ՏԻ-անը բնակիչների մասնակցության կարգեր -1 6. Համայնքի պաշտոնական համացանցային կայք –առկա է</p>
--	---

Ծրագիր 2. Համայնքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում

<p>Ծրագրի նպատակ. Հզորացնել համայնքապետարանի ինստիտուցիոնալ կարողությունները</p>	<p>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Աշխատակազմի կառավարման համակարգերը բարելավվել են, աճել են աշխատակիցների գիտելիքները և հմտությունները, 10 %-ով</p>	<p>Ծրագրի գնահատման համակարգ. ՄԳ կիսամյակային և տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար,</p>	<p>2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր</p>
<p>Միջանկյալ արդյունք 1. Աշխատակազմի աշխատակարգերը և առկա կառավարման (վարչական, ֆինանսական, տեղեկատվական, հեռահաղորդակցության և այլն)</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1. Աշխատակազմի բարելավված աշխատակարգեր և կառավարման համակարգեր – առկա է 2. ՏԻՄ-երի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից</p>	<p>Տեղեկատվական աղբյուրներ Ծրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, ՏՀԶԿԿ ՀԿ, ՄԳ կիսամյակային, տարեկան</p>	<p>Աշխատակազմի քարտուղար</p>	<p>2018թ. հունվար 2018թ. դեկտեմբեր</p>

<p>համակարգերը բարելավվել են</p>	<p>ստացվող դիմում-բողոքների թվի նվազում - 3 %-ով 3. Մասնագիտական վերապատրաստում անցած համայնքային ծառայողների թիվը -8 4. Աշխատակազմում կիրառվող տեղեկատվական համակարգերի թիվը - 1 5. Աշխատակազմում օգտագործվող համակարգիչների թիվը -4 6. ՏԻՄ-երի, աշխատակազմի աշխատակիցների կարծիքը բարելավված կառավարման համակարգերի վերաբերյալ - շատ լավ 7. Տարվա ընթացքում բարելավված աշխատակարգերի թիվը -1 8. Ծրագրի իրականացման ժամկետը -1 տարի</p>	<p>հաշվետվություններ, բնակիչներ</p>		
<p>Միջոցառումներ (գործողություններ) . 1. ՏԻՄ-երի, աշխատակազմի աշխատողների մասնագիտական վերապատրաստման կազմակերպում 2. Համայնքային քաղաքականությունների, ծրագրերի մշակում և կառավարում 3. Համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերի խմբագրում 4. Աշխատակազմի աշխատակիցներին անհրաժեշտ համապատասխան տեխնիկական և ծրագրային միջոցներով ապահովում</p>		<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ). 1. Համայնքի բյուջեով նախատեսված ծախսեր՝ ----- հազ. դրամ 2. Աշխատակազմի վարչական, ֆինանսական, տեղեկատվական, հեռահաղորդակցության և այլ համակարգեր – առկա է 3. Աշխատակազմի կառուցվածք և կանոնադրություն – առկա է Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ</p>		
<p>Միջանկյալ արդյունք 2. Աշխատակազմի աշխատակիցների տեխնիկական և մասնագիտական կարողությունները բարձրացել են</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ). 1. Աշխատակազմում ՀԿՏՀ-ի առկայությունը – առկա է 2. ՀԿՏՀ-ում օգտագործվող ծրագրերի թիվը - 1 3. Աշխատակազմում կիրառվող հեռահաղորդակցության համակարգերի թիվը -1</p>	<p>Տեղեկատվական աղբյուրներ Աշխատակազմ, ՏՀԶԿՀ ՀԿ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Աշխատակազմի քարտուղար</p> <p>2018թ. հունվար – 2018թ. դեկտեմբեր</p>	
<p>Միջոցառումներ (գործողություններ) . 1. Աշխատակազմի աշխատատեղերի վերազինում ժամանակակից տեխնիկայի և կապի միջոցներով 2. Աշխատակազմի գույքի նորացում</p>		<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ). 1. Աշխատակազմի տեխնիկական սպասարկման անձնակազմի աշխատակիցներ - 1</p>		
<p>Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</p>				
<p>Ոլորտային նպատակ. Բարելավել քաղաքաշինության և կոմունալ ծառայության բնագավառում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցումը և որակը:</p>		<p>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. 1. Գիշերային լուսավորված փողոցների թվի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ - 23 % 2. Բնակիչների բավարարվածությունը համայնքում գիշերային լուսավորվածությունից (հարցումների հիման վրա) - ավելի շատ վատ, քան լավ 3. Խմելու ջրի ջրամատակարարման ծառայության մատուցման մատչելիությունից և որակից բնակիչների բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա) - միջին՝ ոչ լավ, ոչ վատ</p>		
<p>Ծրագիր 1. Շիրակամուտ համայնքում փողոցային լուսավորության կետերի ավելացում, լուսամփոփների և հենասյուների ձեռքբերում</p>				
<p>Ծրագրի նպատակ. Բարելավել Շիրակամուտ համայնքի բնակչության, փողոցային լուսավորության պայմանները</p>	<p>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ . Շիրակամուտ համայնքի բնակչության, փողոցային լուսավորության պայմանները բարելավվել են, ավելացվել է փողոցային լուսավորության կետերը, ձեռք է բերվել լուսամփոփներ և հենասյուներ – առկա է</p>	<p>Ծրագրի գնահատման համակարգ . Համայնքի ղեկավար Համայնքի ղեկավարի տեղակալ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար</p> <p>Համայնքի ղեկավարի տեղակալ,</p> <p>2018թ. հունիս – 2018թ. դեկտեմբեր</p>	
<p>Միջանկյալ արդյունք 1.</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ,</p>	<p>Տեղեկատվական</p>	<p>Համայնքի ղեկավար</p> <p>2018թ.</p>	

<p>Բարելավվել են Շիրակամուտ համայնքի բնակչության, փողոցային լուսավորության պայմանները</p>	<p>որակ, ժամկետ) 1. փողոցային լուսավորության կետերի ավելացում .լուսամփոփների և հենասյուների ձեռքբերում տևողությունը- 5 ամիս 3. Բնակիչների կարծիքը փողոցների լուսավորության վերաբերյալ - բավականին լավ</p>	<p>աղբյուրներ Ծրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, բնակիչներ</p>	<p>Համայնքի ղեկավարի տեղակալ,</p>	<p>հունիս – 2018թ. ղեկտեմբեր</p>	
<p>Միջոցառումներ (գործողություններ) 1. Փողոցային լուսավորության կետերի ավելացման .լուսամփոփների և հենասյուների ձեռքբերման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատվիրում և նախապատրաստում 2 Փողոցային լուսավորության կետերի ավելացում .լուսամփոփների և հենասյուների ձեռքբերում աշխատանքների իրականացում և վերահսկում 3. Աշխատանքների կատարման ավարտական ակտի կազմում, քննարկում և հաստատում</p>		<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1. Համայնքի բյուջեից նախատեսված վերանորոգման ծախսեր՝ 1000.0 հազ. դրամ . Նախագծա-նախահաշվային փաստաթղթեր՝ 2 Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ</p>			
<p>Ծրագիր 2 Համայնքի արոտավայրերում խմոցների տեղադրում</p>					
<p>Ծրագրի նպատակ. Բարելավել արոտավայրերի վիճակը և տեղադրել խմոցներ</p>	<p>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. Արոտավայրերում խմոցների տեղադրումից բնակիչների բավարարվածության աստիճանը - միջին՝ ոչ լավ, ոչ վատ</p>	<p>Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար Համայնքի ղեկավարի տեղակալ, Իրականացումը՝ համայնքապետարանի միջոցով</p>	<p>2018թ. հունվար – 2018թ. ղեկտեմբեր</p>	
<p>Միջանկյալ արդյունք 1. Բարելավվել է արոտավայրերի վիճակը և տեղադրվել են խմոցներ</p>	<p>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ) 1. Տեղադրված խմոցների քանակը - 2. 2. Բնակիչների կարծիքը տեղադրված խմոցների վերաբերյալ - ավելի շատ լավ, քան վատ 5. Ծրագրի իրականացման ժամկետը -2 ամիս</p>	<p>Տեղեկատվական աղբյուրներ Ծրագրի գնահատման համակարգ, աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, բնակիչներ</p>	<p>Համայնքի ղեկավար Համայնքի ղեկավարի տեղակալ, Իրականացումը՝ համայնքապետարանի միջոցով</p>	<p>2018թ. հունվար – 2018թ. ղեկտեմբեր</p>	
<p>Միջոցառումներ (գործողություններ) 1. աշխատանքների նախահաշվային փաստաթղթերի նախապատրաստում 2. Խմոցների տեղադրման աշխատանքների իրականացում և վերահսկում 3. Աշխատանքների կատարման ավարտական ակտի կազմում, քննարկում և հաստատում</p>		<p>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) 1. Համայնքի բյուջեով նախատեսված վերանորոգման ծախսեր՝ 500.0 հազ. դրամ 2. Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ4 Ֆինանսավորման աղբյուրը՝ համայնքի բյուջեի միջոցներ</p>			

<p>Ոլորտ 6. Տրանսպորտ</p>					
<p>Ոլորտային նպատակ . Բարձրացնել արոտավայր տանող ճանապարհների , շահագործման և պահպանման ծառայությունների որակը և ապահովել ճանապարհային անվտանգ երթևեկությունը:</p>					
<p>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ. 1. Համայնքային ենթակայության արոտավայր տանող ճանապարհների շահագործման և պահպանման ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա) - միջին՝ ոչ լավ, ոչ վատ</p>					
<p>Ծրագիր 1. „Ալմալու“ արոտավայրեր տանող հանդամիջյան ճանապարհների նորոգում Բնակավայրը՝ Շիրակամուտ</p>					
